ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Ռոման Ահարոնյանի, Թամարա Բաղդասարյանի, Էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Վարազդատ Հարությունյանի, Ցոլակ Մարգարյանի, Դավիթ Մելքոնյանի, Մարինե Ֆարմանյանի և Դավիթ Վարդիկյանի,

քննության առնելով Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի **(այսուհետ, նաև՝ ՀՊԳ)** ղեկավար նշանակելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

«Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 13-րդ կետի համաձայն՝ ***փաստաբանների պալատի խորհուրդը՝ նշանակում է հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին:***

«Փաստաբանության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին նշանակում է Փաստաբանների պալատի խորհուրդը՝ առնվազն հինգ տարվա փաստաբանական ստաժ ունեցող փաստաբանների կազմից՝ չորս տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ:***

«Փաստաբանության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***Փաստաբանների պալատի խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի առաջադրելու հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի թեկնածու՝ վերջինիս համաձայնությամբ:***

Պալատի խորհրդի անդամ Արսեն Հարությունյանը ներկայացրել է ***փաստաբան Գևորգ Մկրտչյանի (փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 1229, տրված 15.10.2011թ.)*** թեկնածությունը:

Փաստաբան Գևորգ Մկրտչյանը տվել է իր համաձայնությունը նշանակվելու

04 նոյեմբերի 2025թ.
թիվ 25/13-Ա
ք. Երևան

ՀՊԳ ղեկավարի պաշտոնում:

«Փաստաբանության մասին» օրենքի 43-րդ հոդվածը ՀՊԳ ղեկավարի թեկնածուի համար նախատեսում է երկու չափանիշ՝ ա) փաստաբանի կարգավիճակի առկայություն, և բ) առնվազն հինգ տարվա փաստաբանական ստաժի առկայություն:

Պալատի խորհուրդը նման պայմաններում գտնում է, որ փաստաբան Գևորգ Մկրտչյանը համապատասխանում է ՀՊԳ ղեկավարի համար Օրենքով սահմանված պայմաններին, քանի որ ունի փաստաբանի կարգավիճակ և ավելի քան հինգ տարվա փաստաբանական ստաժ:

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 13-րդ կետի, 43-րդ հոդվածի, Պալատի կանոնադրության 16.5-րդ կետի 5-րդ ենթակետի, 22.6-րդ կետի և 22.8-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջներով,

Պալատի Խորհուրդը միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Գևորգ Կարապետի Մկրտչյանին (փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 1229, տրված 15.10.2011թ.) նշանակել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար՝ 4 (չորս) տարի ժամկետով՝ 2025 թվականի նոյեմբերի 16-ից մինչև 2029 թվականի նոյեմբերի 16-ը:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Գևորգ Մկրտչյանին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան

04 նոյեմբերի 2025թ.
թիվ 25/13-Ա
ք. Երևան